

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են. «Տեղացիները բուրդովն ուշադրութիւն չեն դարձնում փողոցների մաքրութեան ու լուսավորութեան վրա: փողոցները մեզ մտ դառնալու են ծուռ են և ցեղեկով էլ երկրաչափ է նրանցով անցնել: Թէև տեղիս դաւաճապետի օգնական պ. Ջանդիէրի չինել տուէջ մի քանի լապտերներ, բայց երկար կեանք չունեցան այդ լապտերները և չը գիտենք ինչ պատճառով այլ ևս չեն վառվում:»

Կարասուբաղարից, պ. Պեկլերեանցից ստացանք 2 բուրդ յօգուտ Միացեալ Բնկերութեան:

Մօսկվայից մի պարտն խնդրում է մեզ յայտնել, որ յանձն է առել թարգմանել հայերէն լեզուով Լէսսինգի «Միմնա ֆոն Բառնհեյմ» կոմէդիան:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են որ չորսիւ պ. Մանդինեանցի, Ղարաբաղի հողերը դարձրել է լաւ դրութեան մէջ է: Նոյն տեղից մէջ գրում են որ զեկտեմբերի 20-ին Շուշու քարվանսարայի մօտ հրդեհ պատահեց, զիչերը ժամը 12-ին:

ՋԱԿԱՒԱԽԻՑ մեզ հաղորդում են հետեւեալ անցքի մասին, որ հասկացողութիւն է տալիս մեր կովկասի բարք ու վարքի վրա: Գեկտեմբերի վերջին օրերում մի վաքաթայի 20 տարեկան հայ երիտասարդ գնում է Նուխի և այնտեղ ծանօթանալով մի 15 տարեկան հայ աղջկայ հետ, փայտնում է նրան Նուխուց: Այդ իմանալով աղջկայ ազգականները շտաով հասնում են երիտասարդին և նրան բաւական թակելուց ու նրանից 200 բուրդ փող առնելուց յետոյ, որ նա ստացել էր Նուխում ընկող ծախելուց, աղջկան կրկին տալիս են նրան, ասելով, թէ մեզ պէտք է մի բաւարարեալ աղջիկ: Այժմ պարտը սպրում է Ջաքաթայում փայտքած աղջկայ հետ:

Ստացանք ՄՍՍԿՎԱՑԻՑ 3 բուրդ պ. Մ. Մուրատեանցից յօգուտ Վանի սովխաների, կամ հիւանդանոցի:

ՍԱԼԱՆԻՑ մեզ գրում են: «Վալեանի ձկնորսութեան բաժնիները նոր կանոնադրութեան համաձայն դասազան կապալառուների ձեռն անցնելով, կովկասեան բոլոր բնակիչները մեծ յոյս ունենին թէ ձկնորսը սատարի կէժանանայ: Բայց մենք հակառակն ենք տեսնում. թէև ձուկը առատապէս է որովում, բայց նախորդ կապալառուների ժամանակներից ձուկը այժմ 20 կամ 25% թանգ գնով է վաճառվում:»

ԲԱԳՈՒԻ «Մարդասիրական Բնկերութեան» խորհուրդը խնդրում է մեզ յայտնել, որ յունվարի 27-ին ներկայ 1881 թ.ի լինելու է ընկերութեան ընդհանուր ժողով, համաձայն ընկերութեան կանոնադրութեան 26 յօդուածի:

Պ. Մկրտիչ Խանտամիրեանց ուղարկել է մեզ Մօսկվայից 30 բուրդ յօգուտ Միացեալ Բնկերութեան, որ նուիրել է պ. Աւետիք Զառափեանց և 20 բուրդ յօգուտ Վանի սովխաների մի այստ անձից նուիրած:

Նորերումս աւարտվեցաւ ԹԻՖԼԻՍԻ Միջին փողոցում գտնված շինութիւնը, որ պատկանում է Վասպուրականի հայոց վանքերին: Այդ շինութիւնը կապալով է տրվում: Յանկարողները կարող են դիմել պ. Կարապետ Մուխամբեանի զբարանակար, որ գտնվում է Շաղինովի քարվանսարայում:

Հրատարակեցան «Судебный Порядок» րրաւարանական շարաթաթիթի ստաջին երկու համարները: Այդ հրատարակութեան խմբագիրը պ. Կարաբէկովն է:

**ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**  
ՖԱՆՏԱՍԱ  
Յայտնի է, որ Ֆրանս-գերմանական պատերազմի վերջանալուց յետոյ վարկի մէջ իւրաքանչիւր տարի ծննդեան տօն են կատարում յօգուտ էլ զասի երկխաների: Այս տարի նոյնպէս կատարվեցաւ այդ տօնը, ո-

րին ներկայ էին Ֆրանսիական առաջին միւնիստր ժիւլ Ֆերրի և Գամբետտա, որոնց այդպիսի վարմունքը շատ վատ տպաւորութիւն է գործել Բերլինի պաշտօնական շրջանների մէջ:

Այդ մասին լրագիրների մէջ կարգում ենք հետեւեալը: Ֆրանսիական դեսպանը Բերլինում, կոմս Սեն-Վալիէ հեռագրել է իր կառավարութեանը, որ Ֆրանսիական առաջին միւնիստրի և Գամբետտայի ներկայութիւնը յիշեալ տօնին Բերլինի մէջ մեկնում են իբրև Գերմանիայի դէմ ուղղված թշնամական մի ցոյց, որ յարաբերութիւն ունի Գամբետտայից Շերբուրի մէջ և ընկալիլից Իփոնի մէջ արտասանած ձեռքերի հետ:

Նորութիւն չէ այն իրողութիւնը, որ գերմանական կառավարութիւնը առանձին ուշադրութիւն է դարձնում այն ամեն բանի վրա, ինչ որ պատահում է Ֆրանսիայի մէջ: Այդ բանի հետ եւրօպան վաղուց հաշտվել է և միշտ ծիծաղում է այն անհասկացողութեան վրա, որ տիրում է Բերլինի մէջ, երբ փոքր ի շատե յայտնի մի Ֆրանսիացի ամենաքաղաքավարի կերպով նկատում է, թէ նա առանձին ուրախութիւն չէ գրում Ելլաս-Սոտարինգեան կորցնելու պատճառով: Գերմանական պաշտօնական լրագիրների կատարի յարձակումները այդպիսի անմեղ և բնական նկատուրթութիւնների վրա ոչ ոքի չէ վարմանում: Ամենքը հաշտվել են նոյնպէս և այն իրողութեան հետ, որ գերմանական միւնիստրները, երբ կամենում են աւելացնել պատերազմական միւնիստրի բիւջետի քանակութիւնը, անդադար մասնացոյց են լինում Ֆրանսիայի թշնամական դիտաւորութիւնների վրա:

Այս անգամի նկատողութիւնը սպացուցանում է, որ գերմանական կառավարութիւնը վերին աստիճանի երկոտ է դարձել: Միւնիստրների և պատգամաւորների ժողովի նախագահների անմեղ ներկայութիւնը մանկական տօնին առիթ է տալիս գերմանական կառավարութեանը նկատուրթութիւն անել, կամ աւելի լաւ է ասել՝ խրատել զրացի և բարեկամ կառավարութեանը: Անկասկած Ֆրանսիական դեսպանը իր կողմից չէ արել այդ հաղորդութիւնը, այլ նրան յանձնել է իշխան Բիամարի յայտնել Ֆրանսիական արտաքին գործերի միւնիստրին, որ նա չէ ցանկանում տեսնել այդպիսի ան կ ա ր ք ու թ ի ս ն ն ի ի կրկնվելը:

Մինչև այժմ գերմանական կառավարութիւնը չէր համարձակվում այդպիսի յանդուրժութեամբ վարվել Ֆրանսիայի հետ: Մինչև այժմ Ֆրանսիական արտաքին գործերի միւնիստրները, ինչ կուսակցութեան էլ ներանք պատկանէին, կարողանում էին իրանց արժանաւորութիւնը այնպէս պաշտպանել, որ իշխան Բիամարի իրան թոյլ չէր տալիս ուղղակի դիւլոմատիայի ան կ ա ղ ու մ ա ի ա կ ա ն ի ր ա տ ն ե ր տալ նրանց: Միայն Բարտեղի մի-Սենտ-Վերին վիճակվեցաւ այդպիսի ստորութեանը հասցնել իր հայրենիքը, որովհետև նա անդադար շողօրթութեամ էր Գերմանիային և աշխատում էր նրա կամքը կատարել:

Շատ հետաքրքիր է իմանալ, թէ որքան ժամանակ կը մնան իրանց պաշտօնների մէջ թէ Ֆրանսիական դեսպանը, որ համաձայնեցաւ կատարել Բիամարի յանձնարարութիւնը և թէ արտաքին գործերի միւնիստրը, որ այդպիսի ստորութեան հասցրեց իր հայրենիքը:

**ԲՕԵՐՆԵՐԻ ԱՊՍԱՄԲՈՒԹԻՒՆԸ**

Մի քանի ժամանակից հեռագիրը լուրեր է հաղորդում բօրնների ապօտաւորութեան մասին: Գործի հետ ծանօթանալու համար հետաքրքիր են հետեւեալ պատմական տեղեկութիւնները, որոնց մենք քաղում ենք լրագիրներից:

1602 թ. հօլանդական օստրինդիական ընկերութիւնը մի գաղթականութիւն հիմնեց Բարեկուսոյ հրուանդանի վրա: Մինչև 1795 թ. հօլանդացիները խաղաղ ապրում էին իրանց գաղթականութեան մէջ, երբ անգլիացիները այդ գաղթականութեանը տիրելու համար օգուտ քաղեցին Ֆրանսիական յեղափոխութենից առաջացած պատերազմներից: 1815 թ. կապի գաղթականութիւնը պաշտօնապէս Անգլիային յանձնվեցաւ: Այդ ժամանակից անհայտ թշնամութիւն է սկսվում մի կողմից անգլիացիների և միւս կողմից տեղացի հօլանդացիների՝ բօրնների մէջ: Այդ թշնամութեան պատճառը ոչ թէ միայն անգլիական կառուցումն է, այլ և գաղթական հօլանդացիների անկախ ողին: Անգլիացիները անկարող եղան ենթարկել գաղթականներին իրանց հարստահարող քաղաքականութեանը և նրանք հեռանում էին իրանց տեղերից:

1837 թ. բօրնները ծախեցին իրանց հողերը կապի նահանգի մէջ և գաղթեցին դէպի հիւսիս, որտեղ նրանք հիմնեցին Նատալի գաղթականութիւնը:

5,000 գաղթական բօրնները իրանց անխնայ աշխատանքներով իրանց նոր հայրենիքը հարստութեան աղբիւր և լաւ կազմակերպած պետութիւն դարձրին: Անգլիացիները այդ նահանգն էլ գրաւեցին, իսկ բնակիչների մի մասը ջարդվեցաւ պատերազմի մէջ, միւս մասը դարձեալ չը հպատակեցաւ և գաղթելով դէպի հիւսիս կազմեց Բրանստեան հանրապետութիւնը: 1848 թ. անգլիացիները այդ տեղն էլ գրաւեցին և բնակիչներից շատերին ջարդեցին:

Այս անգամ էլ բօրնները չը կամեցան ծանաչել իրանց անհայտ թշնամիների իշխանութիւնը և դարձաւ դէպի հիւսիս գաղթելով հիմնեցին Տրանսվալի հանրապետութիւնը, 1852 թ. նրան անկախ յայտնեցին, իսկ 1858 թ. սահմանադրութիւն հրատարակեցին, որ ապահովում էր բօրնների նոր հայրենիքի խաղաղ և կանոնաւոր զարգացումը:

Տրանսվալի հանրապետութիւնը Պրուսիայի չափ տեղ էր բռնում, ունէր 40,000 հօլանդացի, 275,000 տեղացի բնակիչներ: 1872 թ. ին անգլիացիները նորից խառնվեցան բօրնների գործի մէջ: 1877 թ. Լօնդօն ուղարկված Տրանսվալի արտաքին մեարտները սիրալիք ընդունելութիւն գտան անգլիական կառավարութենից, բայց նոյն թուին լորդ Բիլօնսֆիլդ յայտնեց, որ այդ հանրապետութիւնը Անգլիայի հետ միացած է: Այժմ այդ տեղ սպասումութիւն է ծագել:

Այս անգամ բօրնները այլ ևս չը կամեցան գաղթել և ամեն ջանքերով աշխատում են ձեռք բերել իրանց անկախութիւնը: Ստացված հեռագիրներից երևում է, որ նրանք հասնում են իրանց նպատակին, քանի որ անգլիական զօրքերը ջարդված են, Տրանսվալի մայրաքաղաքը և ամբողջ երկիրը բօրնների ձեռքին են: Ղազստօնի դրութիւնը չափազանց դժուար է: Նա երբէք չէ հաւանել լորդ Բիլօնսֆիլդի թիւնը, իսկ այժմ Ղազստօն ստիպված է անգլիական զէնքի պատիւը վերականգ-

նել հարաւային Աֆրիկայի մէջ, որպէս զի Անգլիան չը կորցնի այնտեղ իր հեղինակութիւնը և նրա հետ իր բոլոր կառուածները: Մի և նոյն ժամանակ Ղազստօն 1877 թ. իր ձոխ ծաւերով դատապարտում էր պահպանողական միւնիստրութեան քաղաքականութիւնը Տրանսվալի վերաբերութեամբ: Այժմեան առաջին միւնիստրը հըրապարակաւ յայտնում էր իր համակրութիւնը շօլանդիայի ինտելեկտիւցիային, որ աղաղակում էր, թէ Անգլիան յանցանք գործեց բարոյականութեան և բնութեան օրէնքների և միջազգային իրաւունքների դէմ:

Բացի այդ 1877 և 1878 թուականներին Ղազստօն սպացուցանում էր, որ Տրանսվալի դէմ գործած բռնութիւնը առիթ կը տայ նոր անկարգութիւններին, սպասումութեանը և բռնութիւններին: Այդ զուշակութիւններն էլ արդարացան:

Այդ բոլոր անցքերի պատճառը Բիլօնսֆիլդի քաղաքականութիւնն է, որի յաջողքը չը նայելով իր համոզմունքներին և հակումներին, պէտք է չը կարողանայ փախել այդ քաղաքականութիւնը, պէտք է ստիպված լինի շարունակել պատերազմը անգլիական զէնքի պատիւը պաշտպանելու համար և որպէս զի միւս գաղթականութիւններն էլ չապստամբվեն և չանջատվեն Անգլիայից: Արքան էլ ազատամիտ լինի անգլիական կառավարութիւնը, նա անկարող է ներել իր զօրքերի յաղթվելը բօրններից: Անգլիական զէնքի պատիւը ամեն բանից բարձր է դասվում:

**ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ**

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆԸ

ԿԱՏԱՐԻՍ 9 յունվարի: Գիշերը կայծօղ ընկաւ չերնօզօրիական վառօրի պահեստի մէջ: Անտիփոթի մէջ մի քանի տներ քանդված են, 20 մարդ վնասվեցան:

ՓԼԻՔԻ 9 յունվարի: Նօրից ընարված են նախագահներ սենատի համար Լէօն Կէ և պատգամաւորների ժողովի համար Գամբետտա: Գլխավորապէս տեւորական գատարանի բանկետի ժամանակ Գամբետտա ի միջի այլոց ասաց. Ստեղծենք մի այնպիսի ժողովուրդ, որ աւելի զօրեղ և պտղատու լինի ամեն տեսակ թագաւորական ցեղից: Պատգամաւորների ժողովի նիստի ժամանակ Գամբետտա շնորհակալութիւն յայտնեց իրան նորից նախագահ ընտրելու համար և յիշեց այն բոլոր գործերը, ինչ որ կատարել է պատգամաւորների ժողովը և ինչ որ պէտք է կատարէ: Պատգամաւորների ժողովը չի ընդհատի իր նիստերը մինչև կատարեալ ազատութիւն չի տոյ մամուլին, մինչև չի հաստատի ժողովների կառուցումը: Պատգամաւորների ժողովը կատարում է իր պարտականութիւնը խաղաղ ժամանակ, որին վրանդ չէ սպանում և որի պահպանութեան համար գրաւական է հանրապետական կառավարութեան ողին: Երբ իր աշխատանքը կը վերջացնէ, պատգամաւորների ժողովը հաւատարմութեամբ կը ներկայանայ ընդհանուր ձայնատուութեանը: Չարկաւոր է, վերջացնում է իր խօսքը Գամբետտան, Հանրապետութիւններով: Աննատի մէջ Լէօն Կէ շնորհակալութիւն յայտնեց իրան նորից նախագահ ընտրելու համար: Կայտնում է, որ երկրի մէջ ազատ քննադատութիւն է տիրում, որ օրից օր նա աւելի սիրելի է գաւառում ժողովուրդին, յոյս է յայտնում, որ սենատը անկողնապահ կը լինի քննվելի մեծ հարցերը արդարացի կերպով վճարու համար: Աննատ սիրում է առաջադիմութիւն և կարող է նրա չափաւորի Ֆրանսիական հասարակութեան դրութեան համեմատ:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ